

5974

ՀԵՂ. ՅՈՎԷ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

*Handwritten signature*

# Ա Ն Ո Ւ Շ



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն  
Օ Բ Է Դ Ե Թ  
4 Արարի 6 Պատկեր

1930

Գեղ. Տպարան ի. Մամիկեան — Փարիզ


42, Rue de la Jonquière (17<sup>e</sup>)

782.8

Ա-64

52 8  
U-63

24 NOV 2011



*J. Amour*



Գեղ. Տպարանի Խ. Խոփիկա՛նի

42, Rue de la Jonquière, Paris (17<sup>e</sup>)

13 FEB 2013

5974

213

ՅՈՒՆԱԶՄԱՆ

ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ՔՈՒՄԱՆԵԱՆ

Թումանեանի երեսակայութիւնը պզտիկուց է սրուեր: Լօռիի փարսամ լեռներ՝ որ իրենց ծոցին մեջ օրօրամ են անոր մանկութիւնը, ծիլ են տուեր իր սաղանդին, որ փառազնական ոգիներու, եւ հեփեսրապատու, բարի մամիկներու հսկողութեանը սակ կասարեյազործուած է սակաւ:

Ունացալ փոքրիկներն ու վաչկակնացայ շա՛քրեր, որ ուժգին երկիւղի մը սարսուռը պիտի յային մեզի, վսեմին գաղափարը ներշնչած են Թումանեանին եւ բանաստեղծը, այդ սպաւորութեան ներքեւ, դաբերու փոշիներուն սակ քաղուած բամբե եղանակի մը ուժգին արձագանգը հնչեցուց իր կնարի յարերուն վրայ, ու ժայռերուն սակ ննջող Արսաւազբեան փառերն ու Սասմայ ծուերը յարութիւն առին յանկարծ ու երեւցան մարդոց որդիներուն:

Իրն են լեռն ու ձորը, սարն ու անտառը, ժայռն ու արեւը, եւ ինքը՝ ստունց ամեհունը: Բնութեան արսափնապէս կոց բայց կոյս ձեռքը, հազար բարիք է



5399-2011

ձօներ իրեն, եւ ինքր հպարտ է որ մեղկ մթնոլորտի մը մէջ հասակ քաւած ըլլալու բազմը զլացուեր է իրեն, կամ աւելի ճիշդը, ինքն է կամովին մերժած զայն ու այսպէս մնացեր է միջավայրին զուակը, ըլլալով միեւնոյն աստն անոր հարագաս ներկայացուցիչը: Եւ իրաւ, ասկէ դուրս ալ չի կրնար ապրիլ անիկա: Ազատ ու անսահման բնութեան գիրկը, լեռներու քերտ օդին վարժուած, ծանր կը շնչէ քաղցեցի կեանքին մէջ:

Պաշտամունք մը ունի Թումանեան — Հեռակախեր: Ուժն է որ կը խարխաբէ զինքը. ուժը, ըլլայ այն սարերու քէ արեայական ապարանքներու մէջ, անունը իրերու քէ կենդանի եակներու ծոցը, հորերէն խուսափող քաղցրուն քէ կռակը գետին չի բերուած ըմբռներուն մէջ, վաղնջական դիւցազներու քէ ներկայ օրերու արի մարտիկներուն մէջ, կուրծքը հովին ու արեւին բացող հովիւին քէ ժայռի պէս տկուն անոր ետին մէջ, բեամախին գանկը նզովող Ալեքին քէ Ալեքի գլխուն օրհնենք կարգացող լեռնական նահապետավայել, այլփառ քահանային մէջ, դիւցազնուհի Մեհրիին քէ աչք ծակող ասեղներով զինուած արեւին մէջ: Ուժը, նոյն իսկ քերուածներու եւ Այվազովսիի գեղարուեստական նկարներու կտախն վրայ, ուր նկարչի հումանին անսալով ալիքները, կոհակ առ կոհակ: կը լեռնանան կը քարանան իրենց տղը:

Ուժին հանդէպ ունեցած իր այս պաշտամունքն է որ մղաց է զինքն գրի առնելու ՍԱՍՈՒՆՅԻ ԳԱԻԹԻ պէս դիւցազներգութիւններ ուր անիկա կը յայտնուի իբրեւ նեմարսապէս դիւցազներգակ բանաստեղծ մը:

\*  
\*

ԱՆՈՒՇԸ հովուերգութիւն մըն է, սարի մարդերու նշգրիտ մէկ նկարագրութիւնով օժուց, քննուց հովուերգութիւն մը որ եղերերգութեամբ մը կը վերջանայ: Հովուերգական այս չնայ կտորին մէջ ի յայտ կուգան հայրենի աւանդութիւնները, գուշակութիւններու հանդէպ սածուած խորունկ հաւատքին սարսուռը՝ որ դէպքերը կը քաղցնէ իր ուզածին պէս, ըմբռարական գրգիռներն, պարտախն պատուախնդիր զգացումը՝ որ վրէժին մէջ կը գտնէ իր յագեցումը: Համակ բանաստեղծական մթնոլորտի մը մէջ շնչել տուող այս երկին մէջ, սիրահարի ու եղբոր հանդէպ զգացուած սէրերու պայքարը դող մը կը պսցնէ մեր երակներէն ներս, ու կասաղութեան ու կարեկցութեան ներհակ զգացումներ քափ կ'առնեն երբ սիրահարը գետին կը գորուի գնդակահար ու Անուց՝ ցաւէն խելագար, սպասումի, խանդի ու կարօտի իր երգերը կ'երգէ ա՛յնքան արտաուշ եղանակաւ: ԱՆՈՒՇԻ կտորներէն շատերը քնարերգական բնոյթ ունին, եւ ա՛յնքան վարակիչ են անոնք, ա՛յնքան հաղորդական, որ արդէն իսկ քաւած են ժո-

դովուրդին շուրթերուն վրայ եւ ամեն հաւասք կը ներ-  
շնչեն թէ երկար ասեն պիտի դիմանան ժամանակի  
ժանիքներուն:

Թումանեանի լեզուն յորդ է այստեղ, սահուն,  
կայտառ, ուժեղ: Պատկերները գոր կուտայ, բացատրու-  
թիւնները գոր կը գործածէ, բառերը գոր կը դարբնէ  
արեւելեան չափազանցուած երեւակայութեան մը հա-  
րազաս ներկայացուցիչները կ'ըլլան: Ինչ որ հայ մա-  
միկները՝ մեք նախնիքներէն ժառանգած՝ հաղորդեցին  
մեզ բերնէ բերան, ինքը չափուած եւ հրաւելի ներդաւ-  
նակ ձեւով մը կուտայ մեզի:

... Այս բանաստեղծին «Տրսմութեան Սաղմոսներ» են  
խակ անօրինակ ուժ մը, բով մը կը ծորի, ու մարդ  
կըզգայ թէ իրապէս անկեղծ հաւասար մըն է Թու-  
մանեան, որ ցեղը իր ներկայ արեւոտ համբաներէն ան-  
ցրնելով կը սանի ու կը հանգչեցնէ զայն

Ազատ լեռներում,  
Հայոց լեռներում:

ՅՈՎ. Հ. ԱՒԱԳԵԱՆ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Ա. Պատկեր

(Բերն ներկայացնում է Հայաստանի հրաւազեղ  
Լուռայ սարերը: Բեմի աջ կողմը, առաջին պլան,  
Անուշի խրեկը. Անուշը պառկած է խրեկի դրան  
առջեւ. Բեմ է. երազ է սեռնում: Հրեշտակները փա-  
ռաբանում են նրան եւ երգում: Առաւօտ է. լոյսը կա-  
մաց կամաց սկսում է բացուել...)

Հրեշտակներ.—

Եկէ՛ք, քոյրեր, սէյ սարերի՝

Չքքնաղաղեղ ոգիներ,

Եկէ՛ք, ջահել սիրահարի

Սէրը ողբանք վաղամուտ:

Օխտն աղբիւրից ջուր է առել,

Կոյս սափորով, լուռ ու մունջ,

Օխտը ծաղկից ծաղկի քաղել,

Կապել սիրոյ ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղկի աստղունք դրբել,

Խընդիրք արել աստղերին,

Փափաք սրբորով խընդիրք արել՝

Բարի ժրգտան իր սէրին...

Ափսո՛ս, Անուշ, սարի ծաղկի,

Ափսո՛ս իգիթ քու էարին,

Ափսո՛ս բոյից թեւիկ-մեղիկ,

Ափսո՛ս էդ ծով աչքերին...

Վուշ-վո՛ւշ, Անուշ, վուշ-վո՛ւշ, քուրիկ  
 Վո՛ւշ քու սէրին, քու հարին,  
 . . . . .  
 Վուշ-վո՛ւշ, Սարօ, վուշ-վո՛ւշ իգի՛թ,  
 Վո՛ւշ քո սիրած սարերին...  
 . . . . .  
 Վո՛ւշ...վո՛ւշ...վո՛ւշ...վո՛ւշ...

(Վարագոյր)

Բ. Պասկեր

(Հեռուից լսում է հովիւին սրինգի ձայնը, Անուշը խնայն խրհրիկից դուրս է վազում լսելու հովիւին առաւօտան երգը. Սարօն երգում է դրսից...)

Սարօ.—

Աղջի, անաստուա՛ծ, նրստիր վրբանում,  
 Ի՞նչ ես դուրս գալի, խելքամաղ անում,  
 Աշուղ ես չինել, չեմ հանգստանում,  
 Խաղեր կապելով,  
 Չօլեր չափելով,  
 Ոչխարըս անտէր,  
 Ընկել եմ հանգեր:

Անուշ.—

Էն ո՞վ էր, Նանի՛, որ կանչում էր մեզ.  
 Դու չես իմանո՞ւմ. ականջ դի՛ր տես...  
 . . . . .

Ջառնիբան.—

Հերիք է, Անո՛ւշ, ներս արի դադէն,  
 Քանի՞ դուրս թրուչես, նայես դէս ու դէն,  
 . . . . .  
 Տեսնողն էլ կասի — Ի՞նչ աղջիկ է սա,  
 Հազար մարդի մօտ կ'երթայ կը խօսայ:  
 (Սարօն երեւում է սարի վրայ:)

Սարօ.—

Ամա՛ն, էրէցիր սիրարս քո սիրով,  
 Ոտրս կապեցիր թել-թել մազերով,  
 Էլ չեմ դիմանալ կը փախցնեմ զօռով,  
 Ա՛յ սարի աղջիկ,  
 Ա՛յ սիրուն աղջիկ,  
 Ա՛յ դու կարմրաթուշ  
 Թուխամաղ Անուշ:

Անուշ.—

Մտի՛կ տուր, Նանի՛, էն սարի լանջին,  
 Ի՞նչքան աւուկ է սալի կանանչին,  
 Նանի՛, թող գրնամ քաղեմ ու հիւսեմ,  
 Էն սարի լանջին ջան գիւլում տեսմ:

Ջառնիբան.— (Դուրս գալով խրհրիկից)

Հանդիսս կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝  
 Ի՞նչ ունիս ջահել չորանների մօտ,  
 Նստիր վրբանում, քու գործին մրտիկ,  
 Պարկեշտ կաց, աղջի, ամօթ է, ամօթ:

Սարօ.—

Քու հէրն ու մէրր թէ որ ինձ չբասն,

Արին հը թափեմ ես գետի նման,  
 Սարերը կընկնեմ, կորչեմ անդիւման,  
 Ա՛յ սեւ աչքերով,  
 Ա՛յ ծով աչքերով,  
 Ունքերդ կամար,  
 Աղջի քեզ համար:

(Սարօն դուրս է գնում:)

Անուշ.—

Ա՛խ, սիրտքս, նանի՛, չըղիտեմ ինչու  
 Մին լաց է լինում սեւակնամ տխուր,  
 Մին թեւ է առնում, սեղում է թրոչի,  
 Չը գիտեմ թէ ո՛ւր, չըղիտեմ թէ ուր...  
 Նանի ջան, նանի, ես ինչպէ՞ս անեմ,  
 Ի՞նչ անի անքուն անհանգիստ բալէզ...  
 Նանի ջան, նանի՛, կուժը թող առնեմ,  
 Աղբիւրը գրնամ աղջիկների հետ...

(Իսկից լուռ է աղջիկների ձայն. առաստեան  
 դեմ կուժերը ձեռքին, երգելով գնում են աղբիւր ջուր  
 բերելու. Անուշը տեսնելով նրանց, վազում է խրճիթը,  
 կուժը վերցնում ու խառնում է աղջիկների նեռ:)

Աղջիկներ.—

Ամպի տակից ջուր է գալիս,  
 Գօշ է տալի, փրփրբրում,  
 Էն ո՛ւմ եարն է նստած լալիս,  
 Հօնքուր-հօնքուր էն սարում:

Ա՛յ սպաղ ջրեր, գուլալ ջրեր,  
 Որ գալիս էք սարերից,

Գալիս՝ անցնում հանդ ու ջուր,  
 Եարս էլ խմե՞ց էդ ջրրից:



ՏԻԿԻՆ ՍՈՒՐԱԲԵԱՆ (Անուշի դերին մեջ)

Եարար խրմեց, Եարար հովցաւ,  
Վառուած սիրտը էն եարի,  
Եարար հովցաւ, եարար անցաւ  
Այրող ցաւը ջիգեարի...

Ազջի, քու եարն եկաւ անցաւ,  
Վառուած, տարուած քու սիրով,  
էրւած ջիգեարն եկաւ անցաւ,  
Ձը հովացաւ պաղ ջրբով...

Ամպի տակից ջուր է գալի.

Դօշ է տալի փրփրբում.

Ա՛խ, իմ ազիզ եարն է լալի.

Հօնքուր-հօնքուր էն սարում:

(Անուշի վերադարձի միջոցին. Սարն գաղսագողի  
մօտեմում, բռնում է Անուշի ձեռքը:)

Անուշ.—

Թո՛ղ, կանչում են ի՞նչ... մայրս կ'իմանայ...

Սարո.—

Ձէ՛, Անուշ, քիչ էլ, մի քիչ էլ մ'նա...

Անուշ.—

Ձէ՛, թող ես գնամ, ա՛խ ինչ խենթն եմ ես,  
Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,  
Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջւում,  
Դու սարի լանջին խաղեր ես կանչում:  
Վաղը՛ց, վաղուց ես դու ինձ մտացել,  
Ես, երբ եմ եկել այստեղ քարացել,  
Ու մընում եմ քեզ, մընում անիրաւ,  
Էնքան մընացի աչքս ջուր դատաւ:

Սարո.

Ա՛խ, Անուշ Անուշ, էդ ի՞նչ ես ասում,  
Բա դու չե՞ս լսում,

էն՛ որ լանջերին խաղեր եմ ասում,  
Ո՞ւմ հետ եմ խօսում.

էն՛ որ հառաչում ու ա՛խ եմ քաշում,  
էն՛ ո՞ւմ եմ կանչում.

էն՛ որ հառաչում ու ա՛խ եմ քաշում,  
էն՛ ո՞ւմ եմ յիշում.

էն՛ որ մոլորուած նստած եմ մընում,  
Ո՞ւմ հետ եմ լինում...

Ա՛խ, Անուշ, Անուշ, անաստուած Անու՛շ...

(Այդ միջոցին դրսից լսում է Անուշի մօր ձայրը.  
Անուշն ու Սարոն քաղնում են. դուրս է գալիս մայրը,  
վնճում Անուշին, երգելով իջնում է ձորը:)

Ջառնիւան.—

Անուշ, այ ազջի,

Ազջի սեւասիրտ, քու ա՛նը կրարի,

Ազջիկն էլ մենակ ձորը կը մըննի.

Ամպը կոխել է աշխարհը մըթնել,

Ազջի, հէյ, Անուշ, այ ազջի Անուշ...

(Դուրս է գնում)

Անուշ.— (Դուրս գալով սխուր)

Ասում են ուռին՝

Ազջիկ էր ինձ պէս,

Մընում էր եարին

Ու չեկաւ նա տես.

Խեղճը դողալով  
Անյոյս կրօնացաւ,  
Դարգից չորացաւ,  
Ուռննի դարձաւ.

Ջրբերի վրայ  
Դլուխը կախած՝  
Դեռ գողում է նա  
Ու լալիս կամաց,

Ու ամբողջ տարին  
Մի միտք է անում,  
Թէ եարբ եարին  
Ո՞նց է մոռանում...  
Ո՞նց է մոռանում...

(Վարազդր)

Բ. Ահար — Գ. Պասկեր

(Համբարձման օրն է. աղջիկները հաւանում  
ծաղիկ են փաղում իրենց սավորի համար. գիւղացի  
սղերը սարերի վրայից գաղսագողի դիտում են աղջիկ-  
ների պարք. առաւօտ է:)

Աղջիկներ. —

Համբարձումն եկաւ, ծաղկունքը արւան,  
Զուքեղ են հանդեր նախշուն գորգերով,  
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան,  
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

Համբարձում, հայրա,  
հայրա ջան, հայրա,  
Սեւ սարեր հայրա  
հայրա ջան, հայրա:

Երգ ու բոյր խառնած,  
Թեւ թեւի բրնձած  
Զուգում են լեռներ,  
Ծաղիկ են քաղում,  
Ծաղիկ հետ խաղում,  
Ինչպէս թիթեռներ:

Համբարձում, հայրա  
հայրա ջան, հայրա,  
Հաւ օրեր, հայրա  
հայրա ջան, հայրա:

Եկաւ Համբարձում,  
Ծաղկով զարդարում,  
Մեր բաղչին հարցնում  
Ով է մեզ գրած:

Համբարձում, հայրա,  
հայրա ջան, հայրա,  
Սէր օրեր, հայրա,  
հայրա ջան, հայրա:

(Գրեց լսում է Անուշի ձայնը. աղջիկները վազում  
են այն կողմը:)

Անուշ. —

Ա.յ. . . . .

Ա.յ. . . . .

Ա.յ ջան արդայ, չորան արդայ, ո՞ւմն ես գու.  
Աստուած գիտի աշխարհ գիտի՝ իմն ես գու:

5399-2044



Աղջիկներ.—

Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Անուշ.—

Բէխը ծիւծիւ, բոյը թիւ-թիւ էն եարին  
Ի՞նչ դարդ ունիմ քանի նա կայ աշխարհում:

Աղջիկներ.—

Ի՞նչ դարդ ունիմ քանի նա կայ աշխարհում

Համբարձում, եայլա,  
Եայլա ջան, եայլա,  
Լաւ օրեր, եայլա  
Եայլա ջան, եայլա:  
(Պարուս են)

Անուշ.—

Դէ աղջիկներ սկսենք,  
Վիճկահանութեան  
Տեսնենք մեր սափորը  
Ի՞նչ է ասում մեր բազդի  
Համար, Վարդուշ դու սկսիր:

Վարդուշ.— (Երգում է)

Դէ հանիր, աղջի  
Վիճակն է բարի  
Երգելով զովենք  
Մեր խղիթ եարին:

Համբարձում, եայլա,  
Եայլա ջան, եայլա,  
Լաւ օրեր, եայլա  
Եայլա ջան, եայլա:

Խումբր.—

Համբարձում, եայլա,  
Եայլա ջան, եայլա,  
Լաւ օրեր, եայլա,  
Եայլա ջան, եայլա:

Անուշ.—

Դէ աղջիկներ, ջան գիւլում երգենք:

Բոլոր.—

Այո, այո, ջան գիւլում երգենք:

Ա. Աղջիկ.—

*Աղջիկներ*  
Թաքուշ, դու ասա

Թաքուշ.—

Ձեմ կարող, չէ...

Բ. Աղջիկ.—

Դէ լաւ, մի կտարասուի... ասա:

Թաքուշ

Մեր դռանը մի դռան  
Տղերքը եկան նի դարան,  
Կուրս տարայ որ բռնեմ  
Դիփ ալ ու արմաս դարան:

Խումբր.— (Երգում է)

Մեր դռանը, մի դռան,  
Ջան գիւլում, Ջան, Ջան,  
Տղերքը եկան, նի դարան,  
Ջան ծաղիկ ջան, ջան:

Կուրս սարա որ բռնեմ  
Ջան գիւլում, ջան, ջան,  
Դիփ ալ ու ալմաս դարան,  
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Փոքրիկ աղջիկը.— (վիճակը հանելով սափորից)  
Ո՞ւմն է...

Աղջիկներ.—

Եասամանինն է...

(Բոլորը ծիծաղում են)

Համբարձում, եայլա, եայլա ջան, եայլա եւն.

Անուշ.—

Հիմա ո՞վ ասի, նախշուն, հիմա դու ասա...

Նախշուն.—

Աղջի անունդ ասա,  
Գլխիդ բաղդադին խասա.  
Թուշդ դէմ արա պաշեմ,  
Գնա մայրիկիդ ասա:

Խումբը.— (Երգում են)

Աղջի անունդ ասա,  
Ջան գիւլում, ջան, ջան,  
Գլխիդ բաղդադին խասա,  
Ջան ծաղիկ ջան, ջան:  
Թուշդ դէմ արա պաշեմ,  
Ջան գիւլում, ջան, ջան,  
Գնա մայրիկիդ ասա,  
Ջան ծաղիկ, ջան, ջան:

.....

Բոլոր.—

Ո՞ւմն է... ու՞մն է...

Անուշ.— (ձանաչելով.

Վարթուչինն է... Վարթուչինը...

Խումբը.—

Համբարձում եայլա, եայլա ջան, եայլա  
Լաւ օրեր, եայլա, եայլա ջան, եայլա...

Անուշ.—

Նարգիզ, ջան, հիմա դու ասա

Նարգիզ.—

*Ապրիլ*

Այ, թուխ մազաւոր աղջիկ,  
Այ սարի սովոր աղջիկ,  
Չիզեարին գիւլա գիպչի  
Ով որ քեզ սիրի աղջիկ:

Աղջիկ.—

Ո՞ւմն է, ո՞ւմն է...

Բոլոր.—

Վայ... Անուշինն է...

Խումբը.—

Ո՛հ, ինչ սեւ վիճակ քեզ բաժին ընկաւ.  
Սեւաբախտ քուրիկ. նազելի Անուշ.

.....  
Սուտ բան է քուրիկ, դու մի հաւատա.  
Լոկ պատահական, մի չար խօսք է սա.  
Սիրտդ մի կտորիք, սուտ բանի համար,  
Քո խաղդ խաղա, ջան գիւլում ասա:

Անուշ.—

Ա՛խ, չէ՛, ես գիտեմ որ ես բախտ չունեմ,  
եւ երբէ՛ք, երբէ՛ք բախտ չեմ ունեցել,  
եւ միշտ էլ էսպէս անբախտ կը լինեմ.  
Մանուկ օրից եւն դեռ ինձ անիծել:

Խումբը. —

Հազիստ կաց, քոյրիկ, մի վախիր այդքան,  
Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ  
Այդ քո նորահաս մասալ կուսութեան  
Քո առջեւ դեռ կան երջանիկ օրեր:

Անուշ.—

Ասում են՝ մի օր, ես օրօրացում  
Մի պատու գաւրիչ մեր գունն է գալի,  
Իր խաղն է ասում, ու բաժին ուզում,  
Իմ նանը նրան բաժին չի տալի:  
Կորի՛ ասում է, կորի՛ մեր գրանից,  
Երեսաս ձաքեց, հեռացիր գնա...  
Ու գաւրիչն այնտեղ անիծում է ինձ,  
Թէ՛ դրա օրը լացով անց կենայ...

Խումբը.—

Այ՛ջի բախտաւոր,  
Երնէ՛կ քո սէրին,  
Քո սարի սովոր  
Սեւ - սեւ աչքերին:  
Համբարձում եայլա, եայլա ջան, եայլա  
Սէր - օրեր եայլա, եայլա ջան, եայլա...

*Handwritten mark*

Մեանեմ գարունքիդ,  
Ծաղկանց գարուն ես  
Սարի պէս մէջքիդ  
Կանգնած եար ունես:

Համբարձում եայլա, եայլա ջան, եայլա.  
Սար - եարեր, եայլա, եայլա ջան, եայլա...

(Բոլորն դուրս են գնում բեմից. Անուշը մնում է մենակ):

Անուշ.—

Ա՛խ, այն գաւրիչի անէ՛ծքին անգու՛թ,  
Սիրաբո էլ միշտ տխուր, սիրաբո էլ միշտ մու՛թ  
Ու այս վիճակին տեղեակ է Աստուած,  
Ինչ կայ չը գիտեմ, իմ առաջ պահւած...

(Դրսից յաւոււ է վերհնետի ձայնը)

Փերին

Վուչ, վուչ, Անուշ. վուչ, վուչ, քուրիկ...  
Վուչ, քու սէրին, քու եարին...

Անուշ.—

Ա՛ . . . . .

Փերին.—

Վուչ, վուչ, Սարօ, վուչ, վուչ իգիթ,  
Վուչ, քու սիրած սարերին...

Անուշ.—

Ա՛ . . . . .

Փերին.—

Վուչ. . . . .

Անուս.—

Ս. . . . . Ս. . . . . Ս. . . . .

Փերին.—

Վո՛ւշ . . . . .

(Վարագոյր)

\*\*\*

Գ. Արար — Գ. Պատկեր

(Համբարձման սօնի երկրորդ օրն է. գիւղացիներ հաւաքուած ուրախութիւն են կատարում. աղջիկներ եւ տղաներ եկել են լոռուա դաշտի սօնը սօնելու):

Խումբը.— (Պարում է)

Դէ՛ թռիւր, դէ՛ շուա թռիւր, շուա թռիւր,

Դէ թռիւր հօր-հօր թռիւր, շուա թռիւր...

Մէջդան բաց արէք որ գիւլաշ բռնեն

Սարօն ու Մօսին թող գիւլաշ կպչեն

Նայ, նա նայ, նա նայ, նա նայ. . . . .

(Սարօն ու Մօսին գիւլաւ են կպչում. Սարօն տեսնելով Անուսի յուզուած դեմքը, Մօսին գետնին է գարկում: Անուսը տեսնելով իր եղբոր պարտուիրը, հեռանում է բեմից: Մօսին կատարած ցատկում է սեղից, բայց գիւղացիներ զսպում են Մօսիի կատարութիւնը):

Խումբը.—

Չեղաւ, էդ չեղաւ, վեր չի գցել դեռ,

Մօսին, թօղ էլաւ խողապարկուկ էր...

Հա, հա, հա, հա, հա, . . . . .



ՏԷՐ ԵՒ ՏԻՎԻՆ ՍՈՒՐԱՅԵԱՆ  
Անուսի եւ Մօսիի դերին մէջ

Մօսի.— (կասալամ)

Թող գայ, որ բռնենք նորից,  
Թէ՛ չէ նամարդը, արեւս եմ երգուում.  
Է՛լ, չի պրծնելու երբէք իմ ձեռքից:

Խումբը.—

Հա, հա, հա, հա, հա,  
Շատ էլ լաւ կան մէջքը թափ արւէք,  
Մէջքը թափ արւէք թող նորից բռնի  
Հա, հա, հա, հա, հա, (Բոլորը գնում են)

Մօսի.— (մենակ)

Անօ՛թ քեզ, Մօսի, թուք ու նախաստինք,  
Անօ՛թ քեզ նման, գոված իգիթին,  
Դեռ քու թիկունք չէր տեսել գետին,  
Ի՞նչպէս վեր բնկար դու սարի նրման,  
Եկա՛ճ էր էս բան իսկի քու գլխին...  
Դէ մեռիր էլի, գետինը մրտիր,  
Տանը վեր բնկիր իլիկ պարտիր...  
Ա . . . . . Ա . . . . . Ա . . . . .

(Մօսին տեսնելով Անուշին. դառնյր մեղկացրնում է, ու բռնում Անուշի քեր):

Անուշ.—

Վա՛յ , վա՛յ, Մօսի ջան, ինձ մի՛ սպանիր.  
Վախենում եմ, ես... դամէթ տեղը գիր...  
Քո սախ հողն եմ. Մօսի ջան, Մօսի՛,

Մօսի.—

Դէ իմ անունով երգուիր անգգամ

Անուշ.—

Դու քու կասիրին երգում ես տալի,

Մօսի.—

Որ էլ Սարօին չես սիրել երբէք,

Անուշ.—

Ես էլ Սարօին չեմ սիրի սախ

Մօսի.—

Թէ, չէ, տեսնում ես, խանչալը հանած՝

Անուշ.—

Տեսնում ես չորած ինչպէս եմ լալիս,

Մօսի.—

Մինչեւ դաստակը սիրազ եմ խրելու:

.....  
Դու խարօ՞ւմ ես ինձ, սուտլիկ խաբերայ,  
Էն ի՞նչ է, հապա, էն ի՞նչ հապա  
Որ տեղն ենք մրտնում, հեկեկում ես դու  
Ու լալիս կամաց . . . . .  
Էն ի՞նչ է, հապա, որ դու՛ երազում  
Սարօ, ջան Սարօ, Սարօ ես ասում,

Անուշ.—

Մօսի ջան, Մօսի, գլխովդ շուռ գամ

Մօսի.—

Սարօ, ջան Սարօ, Սարօ ես ասում

Անուշ.—

Ինձ մի սպանիր, ինձ թող էս անգամ,  
Էլ չեմ սիրելու, երբ դու չես ուզում  
Էլ չեմ կանչիր ես նրան երազում,

Ինձ մի սպանիր զամէթ տեղը գիր  
Իս քոյրը չե՛մ ես, իմ Մօսին չե՛ս գու

Մօսի.—

Նամարդ Սարօն, ինձի գուշման,  
Իմ քնկերը ինձի գուշման,  
Վայ, լէ՛, լէ՛, լէ՛...  
Վայ, լէ՛, լէ՛ լէ՛...  
Վրէժ, վրէժ նամարդից... (գու.բս և գնու.մ)

Անու.ե.—

.....  
Օրեր, կասեմ քեզ իմ սէր,  
Մօսին խից Սարօին. մինչ գերեզման գուշման.  
Քնիր իմ սէր անթառամ,  
Քնիր, քնով յուխանա՛ն:

(Սարօն գաղսագողի մօտեցում է Անու.եին և գրկում):

Անու.ե և Սարօ.—

Համբա՛սում եայրա, եայրա ջան, եայրա  
Լաւ օրեր եայրա, եայրա ջան, եայրա.

Անու.ե —

Մենակ ես ինձ թողնում,  
Սարօ ջան, իմ Սարօ,  
Ուր էլ կուգես գնանք,  
Գալիս եմ, գալիս եմ:

Սարօ և Անու.ե.—

Գնանք, գնանք, գնանք:  
Գնանք, գնանք, գնանք,  
Գնանք... Գնանք...

Անու.ե.—

Մօսին ինձ կը սպանի  
Սարօ ջան, իմ Սարօ,  
Ու վրէժը քեզանից  
Գնա՛կա՛ս կը հանի:

Միասին.—

Գնանք, գնանք, գնանք,  
Գնանք: գնանք, գնանք,  
Գնանք, գնանք, գնանք...

(Սարօն գրկում է Անու.եին, ու փախցնում: Կրքսից լուում են ձայներ. սուլում. աղմուկ. աղօղիկ, խղայ, իրար խառնում բեմ եւ վագում. միմիանց հարցնում, ի՞նչ է պատահել):

Ջախար.—

Ս,յ մարդիկ, հատէք, հատէք. աղջկան փախցրին:

Խուսիք.—

Փախցրել է Սարօն, Սարօն, Անու.չին,  
Հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ,...

Ջախար.—

Էս գիշեր կէսը կը լիներ գիշերուայ,  
Հա, հարա՛ր կէսը կը լինէր գիշերուայ,  
Շունը վեր կացաւ, էս՝ կռան վրայ,

Հէ՛յ, հէ՛յ, ձէն տուի, ձէն արևոյ չելաւ.  
Շունը կատաղեց, շունը վեր կալաւ  
Երկու մարդկային սեւ կերպարանքներ  
Շան առջեւ փախան՝ ցած իջան ներքեւ  
.....

Խումբը.—

Հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ...  
Փախցրել է Սարօն, Սարօն Անուշին  
Հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ...

Զախար.—

Էս գիշեր կէսը կը լինէր գիշերւայ,  
Հա, հալալ կէսը կը լինէր գիշերւայ,  
Շունը վեր կացաւ էս կռան վրայ,  
Հէյ, հէյ, ձէն տուի, ձէն արևոյ չելաւ,  
Շունը կատաղեց, վեր կալաւ.  
Երկու մարդկային սեւ կերպարանքներ  
Շան առջեւ փախած՝ ցած իջան ներքեւ:

Խումբը.—

Հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ...

Մօսի.— (դուրս գալով կասաղած)

Երգուում եմ ահա Աստուծոյ անունով  
Ուր էլ, որ լինի զօնեմ ես նրան  
Ու մի հարուածով վերջ տամ իր կեանքին  
(Դուրս է գնում)

Խումբը.—

Հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ...  
Փախցրել է Սարօն, Սարօն Անուշին...

Հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ, հէյ...  
Ա. . . . . Ա. . . . . Ա. . . . .

(Վարագայր)

\*\*\*

Ե. Պաշկեր

(Սարօն մեմակ լօռուա ձուրեում. երգում է իրեն  
դարդերը):

Սարօն.—

Բարձր սարեր, այ սարեր,  
Ձէն եմ ապի, վայ սարեր,  
Դուք էլ ինձ հետ ձէն արւէք  
Իմ դարդերին թայ սարեր:  
Որս եմ՝ բութէս ձեզ արած,  
Ձեր սարերին, ձեզ արած,  
Կուզեմ կորչեմ անգիւման  
Էս աշխարհքից բէզարած:  
Կորչեմ բէզար գատարկուն,  
Քար սարէ-սար գատարկուն,  
Մեռնեմ պրրծեմ էս օրից,  
Բալքի առնեմ դադար-քուն:  
Ա՛խ կը մեռնեմ՝ աման նա  
Վա՛յ թէ յանկարծ իմանայ,  
Ես ազատեմ էս ցաւից,  
Աչքը լալով նա մրնայ...

(Այդ միջոցին Մօսին երեւում է սարերի վրայ-  
սեռնելով Սարօնին քափուում է սարի յետեւ, և հրացանը

կրակում, սպանում է Սարօին. Կրսից լսելով հրացանի պայթիւնը բոլոր գիւղացիները բեմ են վազում. տեսնելով Սարօի դիակը, տղամարդիկ գլխակները հանում, ծունկ չոտում. այդ միջոցին ամբողջ նեղելով ներս է վազում Անուէր. տեսնելով դիակը... խելագարւում է. աղջիկները մեղմ երգում են):

Խումբը.—

*Համբարձում հայրա, հայրա ջան, հայրա,  
Սեւ օրեր հայրա, հայրա ջան, հայրա...*  
(Կամաց կամաց իջնում է վարագոյրը)

\*\*\*

Գ. Արար — Զ. Պատկեր

(Անուէր խելագարւած՝ ծաղիկները ձեռքին. լալով իջնում է սարերից):

Ճամբորդը.—

*Միրուն աղջիկ, Ի՞նչ ես լալիս  
էզպէս մենակ ու մոլոր,  
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս  
էս ձորերում ամէն օր:  
Թէ լալիս ես, վարդ ես ուզում,  
Մայիս կը գայ մի քիչ կաց,  
Թէ լալիս ես, թէ եարդ ես ուզում  
Ա՛խ նա գրնաց, նա գրնաց:*

*Արտասուելով, լալով էզպէս  
Ետ չես գարձնի էլ եարիդ*



Տիկ. ՍՈՒՐԱՆԵԱՆ-Անուէրի խելագարւած դերին մեջ

Ինչո՞ւ ի դուր հանդցնում ես  
 Ջահել կրակն աչքերիդ...  
 (Ճամբորդը հեռանում է)

Աճուռ.—

Շնորհակալ եմ, անցւոր պապէր,  
 Ածառած պահի քու եարին,  
 Ճամբիդ վերջում կանգնած է դեռ  
 Անուշ ծիծաղն աչքերին...  
 Ուրախ սրտով դուք ձեր սէրը  
 Վայելեցէք անթառամ,  
 Ինձ արցունք է տրւել Տէրը,  
 Ես պիտի լամ, պիտի լամ...

Ես դա՛ն, ե՛ս իգի՛թ,  
 Ես դառ, անիրա՛ւ  
 Կարօտած եարիդ  
 Աչքը ջուր գառաւ.  
 Ոչխարդ էն սարով  
 Շուր տուր, տուն արի՛,  
 Փախիր գիշերով  
 Ու թազուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին  
 Ո՞վ է քրնած էն տղէն,  
 Վրբէն քաշած սեւ եափընջին,  
 Կուռը հանած էն տղէն...  
 Ջա՛ն, իմ եարն է, ջանի՛ն մեռնեմ,

Ծաղկի հոտով նա հարբել,  
 Սարի լանջին, հովի միջին  
 Մուշ-մո՛ւշ, անուշ մըրափել...

Վեր կաց, վեր իգի՛թ,  
 Վե՛ր կաց անիրա՛ւ,  
 Ոչխարդ բեր կիթ,  
 Օրը ճաշ դառաւ...  
 Արի՛, ջա՛ն, արի՛,  
 Բու գալուն մեռնեմ,  
 Թուխ չորան, արի՛,  
 Կարօտըս տոնեմ...

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դափ ու զուռնով  
 Ի՛նչ հարսանիք է դուրս դալի,  
 Մարդիկ ուրախ, թօն ու ձիւնով  
 Զի են խաղում, չափ տալի...  
 Աղջի, աղջի, մրտիկ արեք,  
 Էս ի՛նչ տեսիլք ես տեսայ.  
 Ո՞վ էր տեսել էսպէս հարսնիք—  
 Ոչ հարս ունին, ոչ փեսայ...

Բերում են հրբէ՛ն  
 Ամա՛ն, մեր տան գէմ  
 Վեր զրբէք, վրբէն  
 Հիւսերս քանդեմ...  
 Ես էլ չեմ գալի՛ս,  
 Էդ ո՞ւր էք տանում...

Ինձ էլ թաղեցէր  
Իմ գերեզմանում...

.....  
Ա՛խ, չէ աման, ասում են դա,  
Մի գիակ է լո՛ւռ, հասած,  
Արիւնք չոր գէ՛մքին վրայ,  
Աչքերն անթա՛րթ, սիպտակած  
Նա սիրում էր անուշահոտ,  
Աչքերը լի ծիծաղով,  
Նա գալիս էր ցողոս-չողոս,  
Հանաքներով ու խաղով...

.....  
Արի՛, ջա՛ն իգիթ,  
Արի անիրա՛ւ,  
Կարօտած եարիզ,  
Աչքը ջուր գառաւ,  
Էլ մի՛ ուշացնի,  
Ես շատ եմ կացել  
Էլ մի՛ լացացնի,  
Ես շատ եմ լացել.  
Տե՛ս կը խրտովե՛մ,  
Լաց կը լինեմ ես է՛լ...  
• Չեմ խօսիլ քեզ Տե՛ս...  
Չեմ սիրել քեզ է՛լ...

.....  
(Մարօի գերեզմանի վրայ ընկնում, մեռնում է.  
բեր մրնում է, երկնից սպիտակ լոյս է իջնում Անուշի  
վրայ. հրեշտակներ երեւում են ու մեղմ երգում):

Հրեշտակ.—

Վուշ-վո՛ւշ, Անուշ վուշ-վուշ քուրիկ,  
վո՛ւշ քու սէրին, քու եարին  
Վուշ-վո՛ւշ, Սարօ, վուշ-վո՛ւշ իգի՛թ,  
վո՛ւշ քու սիրած սարերին...

Ա՛ . . . . .  
Վո՛ւշ . . . . .  
Ա՛ . . . . .  
Վո՛ւշ . . . . .  
Ա՛ . . . . . Ա՛ . . . . . Ա՛ . . . . .  
Վո՛ւշ . . . . .

(Վարագոյր)

— Վ Ե Ր Ջ —

*Handwritten signature or initials in blue ink.*



300

Հայաստանի Ազգային գրադարան



NL0424996

